

5.6. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության վերահսկողության մոնիտորինգը 2001թ.

Օդային ավազանի վիճակի վերահսկողություն: 2001թ. մթնոլորտի աղտոտվածության վիճակի հսկողություն է իրականացվել Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի և Ջրագղան քաղաքներում տեղակայված 11 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

2001թ. ընթացքում մթնոլորտային օդի 34189 փորձանմուշներում (2000թ.՝ 28977) որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի և երկօքսիդի, քլորի, քլորոպրենի և արոմատիկ ածխաջրածինների պարունակությունները:

Գերազանցվել են հսկվող 8 (2000թ.՝ 6) մթնոլորտային աղտոտիչ նյութերից 6-ի պարունակության առավելագույն սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ): Հսկվող աղտոտիչ նյութերի բարձր աղտոտվածության (ՍԹԿ գերազանցում 10 և ավելի անգամ) դեպք չի արձանագրվել:

- Երևանում տեղակայված 5 դիտակայանից գործել են 3-ը: Քաղաքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրներն են ավտոտրանսպորտը, արդյունաբերական օբյեկտները, ՋԷԿ-ը, կաթսայատները: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 2001թ. ընթացքում քաղաքի մթնոլորտում ածխածնի օքսիդի, ֆորմալդեհիդի պարունակության չափումներ չեն կատարվել: Օդի հետազոտված 16030 փորձանմուշների փորձազննման միջոցով (2000թ.՝ 9946) որոշվել են 10 աղտոտիչ նյութերի կոնցենտրացիաները: Փորձանմուշներից 2029-ում կան 12.7%-ում (2000թ.՝ 3369 կան 33.9%) արձանագրվել է փոշու և ազոտի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ի գերազանցում: Փոշու միջին տարեկան ՍԹԿ-ն գերազանցվել է 3.3 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.2, ծծմբի երկօքսիդինը և բենզոլինը՝ 2.0 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³		2001թ. կոնցենտրացիաների աճը կամ նվազումը 2000թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %	
	առավելագույն	միջին տարեկան	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	1.9	0.5	- 13.6	- 28.6
Ծծմբի երկօքսիդ	0.27	0.10	- 18.2	- 23.1
Ազոտի օքսիդ	0.16	0.04	- 20.0	- 33.3
Ազոտի երկօքսիդ	0.38	0.09	22.6	- 30.8
Քլոր	0.03	0.00	50	0

- Արարատ քաղաքում մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրը ցեմենտի արտադրությունն է: Քաղաքում մշտապես գործող մեկ դիտակայանի միջոցով 2001թ. ընթացքում վերցվել է փոշու պարունակության որոշման 862 փորձանմուշ: Ըստ փորձազննման արդյունքների, փորձանմուշներից 289-ում կան 33.5%-ում արձանագրվել է ՍԹԿ-ի գերազանցում: Ցեմենտի փոշու առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները գերազանցվել են համապատասխանաբար 5.3 և 3.0 անգամ ու կազմել 1.6 մգ/մ³ և 0.3 մգ/մ³:
- Ալավերդի քաղաքում տեղակայված 2 մշտական դիտակայանների միջոցով որոշվել են փոշու, ածխածնի օքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների պարունակությունները մթնոլորտում: Վերցված 5905 փորձանմուշներից (2000թ.՝ 6357) 258-ում կան 4.4%-ում (2000թ.՝ 291 կան 4.6%) արձանագրվել է ծծմբի և ազոտի երկօքսիդների առավելագույն ՍԹԿ-ի գերազանցում: Ծծմբի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 3.8 անգամ, միջին տարեկան

ՍԹԿ-Ն՝ 3.4 անգամ: Մնացած նյութերի կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³		2001թ. կոնցենտրացիաների աճը կամ նվազումը 2000թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %	
	առավելագույն	միջին տարեկան	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	0.4	0.1	0	0
Ծծմբի երկօքսիդ	1.89	0.17	92.9	- 10.5
Ածխածնի օքսիդ	4	1	- 20	- 50
Ազոտի երկօքսիդ	0.09	0.03	0	0

- Վանաձոր քաղաքում տեղակայված 3 դիտակայանների միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 9774 փորձանմուշ (2000թ.՝ 10044), որոշվել են փոշու, ածխածնի օքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները: Փորձանմուշներից 22-ում կամ 0.2%-ում (2000թ.՝ 39 կամ 0.4%) գրանցվել է փոշու և ածխածնի օքսիդի առավելագույն ՍԹԿ գերազանցում: Փոշու և ածխածնի օքսիդի առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.2 և 1.4 անգամ, իսկ փոշու և ծծմբի երկօքսիդի միջին տարեկան ՍԹԿ-ն՝ համապատասխանաբար 1.3 և 1.4 անգամ: Մնացած նյութերի կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³		2001թ. կոնցենտրացիաների աճը կամ նվազումը 2000թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %	
	առավելագույն	միջին տարեկան	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	0.6	0.2	0	0
Ծծմբի երկօքսիդ	0.24	0.07	0	0
Ածխածնի օքսիդ	7	3	16.7	0
Ազոտի երկօքսիդ	0.08	0.03	0	0

- Գյումրի քաղաքում տեղակայված մեկ դիտակայանի միջոցով 2001թ. վերցվել է փոշու կոնցենտրացիայի որոշման 729 փորձանմուշ, միջին տարեկան և առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 2.7 և 4.8 անգամ և կազմել 0.4 մգ/մ³ և 2.4 մգ/մ³:
- Հրազդան քաղաքում տեղակայված մեկ դիտակայանի միջոցով վերցվել է օդի 889 փորձանմուշ, որոնց մեջ որոշվել է ցեմենտի փոշու կոնցենտրացիաները: Փոշու առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 5.3 անգամ, իսկ միջին տարեկանը՝ 5 անգամ:

Մակերևութային ջրերի մոնիտորինգ: 2001թ. հանրապետության մակերևութային ջրերի որակի հետազոտման նպատակով փորձանմուշներ են վերցվել 14 գետերի, Սևանա լճի, Երևանյան լճի և Ապարանի ջրամբարի 29 (2000թ.՝ 5145) հսկման հատվածքներից: Վերցված 177 (2000թ.՝ 202) փորձանմուշներում կատարվել է ջրերի աղտոտիչների պարունակության կոնցենտրացիաների որոշման 4471 փորձազննում (2000թ.՝ 5479):

Հրազդան գետում գրանցվել է «արտակարգ բարձր» աղտոտվածության եզակի դեպք՝ թթվածնի պարունակությունը նվազել է մինչև 0.3 մգ/մ³, որի հետևանքով դիտվել է ԹԿՊ₅-ի «բարձր» աղտոտվածություն: ՍԹԿ-ն գերազանցվել է 17 անգամ (Երևան քաղաքից 6 կմ ներքև ընկած հատվածքում): Այդ հատվածքում դիտվել է նաև ամոնիում և նիտրիտ իոնների բարձր աղտոտվածություն: Ամոնիումի իոնի պարունակությունը դիտվել է ՍԹԿ-ից 12-31 անգամ բարձր, իսկ Երևանյան լճում և Գետառում նիտրիտի իոնի պարունակությունը ՍԹԿ-ն գերազանցել է 10-15 անգամ:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նիտրիտ իոնների միջին տարեկան ՍԹԿ-ն 2-3 անգամ գերազանցվել է Փամբակ, Դեբեդ, Հախվերդ, Արաքս, Սևջուր գետերում և Ախուրյանի ջրամբարում, իսկ 4-5 անգամ՝ Ախուրյան, Ազատ և Հրազդան գետերում:

Նավթամթերքի պարունակության միջին տարեկան ՍԹԿ-ն Քասաղ, Սևջուր, Ազատ, Արաքս գետերում և Երևանյան լճում գերազանցվել է 2-3, իսկ Հախվերդ, Գետառ, Հրազդան գետերում և Ախուրյանի ջրամբարում՝ 4-5 անգամ:

Պղնձի իոնների միջին տարեկան ՍԹԿ-ն վերցված բոլոր նմուշներում գերազանցվել է 8-15 անգամ:

Սուլֆատ իոնների միջին տարեկան ՍԹԿ-ն 2-8 անգամ գերազանցվել է Սևջուր, Գետառ, Ազատ գետերում և Երևանյան Լճում:

Մագնեզիում իոնների միջին տարեկան ՍԹԿ-ն 1.4-1.6 անգամ գերազանցվել է Սևջուր գետում:

2001թ. համեմատ հանրապետության գետերում նվազել է նիտրիտ իոնների կոնցենտրացիաները, իսկ ամոնիում իոնների և նավթամթերքի կոնցենտրացիաները բարձրացել են:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաներն եղել են թույլատրելի նորմաների սահմաններում: